# ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ՀԱՎԱՔ ՇԻՐԱԿԻ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆՈՒՄ

Համաձայն Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի և ՀՀ վարչապետի միջև այս տարի կնքված համաձայնագրի, 2003 թվականի հունվարի 1-ից հանրակրթական դպրոցներում պետք է դասավանդվի Հայ Եկեղեցու պատմություն առարկան, ինչն աշակերտներին հնարավորություն կտա առավել մոտիկից ծանոթանալու հայրենի երկրի, հարազատ Եկեղեցու և սեփական ժողովրդի իրար միահյուսված պատմությանը:

Դպրոցներում այս առարկայի դասավանդման աշխատանքների շրջանակներում դեկտեմբերի 3-ին Շիրակի թեմի առաջնորդ Տ. Միքայել եպս. Աջապահյանն առաջնորդարան էր հրավիրել Գյումրի քաղաքի, ինչպես նաև տարածաշրջանի հանրակրթական դպրոցների տնօրեններին:

Հանդիպմանը մասնակցելու էին եկել Հայաստանի Աստվածաշնչյան Ընկերության ներկայացուցիչներ Տ. Շահե քհն. Հայրապետյանը, ինչպես նաև Հայաստանի թեմերի զարգացման ծրագրի տնօրեն և Հայաստանի Աստվածաշնչյան Ընկերության հոգաբարձուների խորհրդի քարտուղար պրն Արշավիր Գաբուզյանը:

Ներկա էին նաև Շիրակի մարզի կրթության բաժնի պետ Սահակ Մինասյանը, Հայ Կաթողիկե Եկեղեցու Հայաստանի, Վրաստանի և Արևելյան Եվրոպայի առաջնորդ Գերապայծառ Տ. Ներսես արքեպս. Տեր-Ներսեսյանը, Ավետարանական Եկեղեցու վերապատվելի Ռնե Լևոնյանը:

Ինչպես իր խոսքում նշեց պարոն Ա. Գաբուզյանը, իրենք մի գեղեցիկ ավանդույթ են որդեգրել, ըստ որի՝ ուր գնում են, Աստվածաշունչ Մատյանից մի հատված են ընթերցում և ապա՝ մեկնաբանում: Այս անգամ Տ. Շահե քահանան կարդաց Մատթեոսի Ավետարանի ԻԸ գլխի 16-20 համարները և մեկնեց այն ներկաների համար:

Շիրակի մարզի կրթության բաժնի պետ Սահակ Մինասյանը նախ ողջունեց հյուրերին և ապա գնահատանքի խոսքեր ուղղեց առաջնորդ Սրբազան Հորը՝ նման հավաք կազմակերպելու համար, ի սրտե շնորհակալություն հայտնելով կրթական այս նախագիծ-ծրագրի հեղինակներին, ապա շեշտեց, որ Հայ Եկեղեցու պատմությունը կօգնի այսօրվա աշակերտությանը՝ բացել իրենց համար դեռևս փակ շատ դռներ:

Աստվածաշնչյան Ընկերության ներկայացուցիչը պարոն Սահակ Մինասյանին նվիրեց Աստվածաշունչ Մատյան և այն մեկնաբանող ևս հինգ հատորյակ օժանդակ գրականություն, որոնք միասին կազմում են մեկ ամբողջություն և Աստվածաշնչյան Ընկերության կողմից ստացել են «Վեցհատորյակ» անվանումը:

Եզրափակելով հավաքը, առաջնորդ Սրբազան Հայրը նախ ողջունեց հյուրերին, ողջույնի առանձնահատուկ խոսք հղեց վերապատվելի Ռնե Լևոնյանին, որն առաջին անգամ էր առաջնորդարանում, ապա նշեց, որ եթե որևէ կրոնական կազմակերպություն ուզում է թեմից ներս ինչ-որ օգնություն ցուցաբերել, պետք է ոչ թե այդ հարկի պատուհանով մտնի, այլ՝ դռնից, որը տվյալ դեպքում առաջնորդարանն է:

Հավաքի վերջում «Վեցհատորյակ» գրքեր նվիրվեցին նաև մասնակից տնօրեններին:

*ՄԱՐԻԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆ*